ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 օգոստոսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

117
(2783)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՐԱՀԱՆԳ ԿԱ՝ ԲՈԼՈՐԸ ՔԱՐՈԶ ԱՆԵՆ

Երեկվանից մեկնարկել է Երեւանի ավագանու ընտրությունների պաշտոնական քարոզարշավը:

Քաղաքապետի 14 թեկնածուները 24 օր շարունակ կշրջեն Երեւանի վարչական շրջաններով եւ խոստումներ կտան երեւանցիներին:

Քարոզարշավին թերեւս ամենամարտականը տրամադրված է իշխող «Քաղաքացիական պայմանագիր»-ը, որի համար Երեւանում իշխանություն պահելը կենաց-մահու հարց է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ում այնքան լուրջ են տրամադրված, որ բոլոր պատգամավորներին եւ ավագանու ցուցակի անդամներին հրահանգվել է ոչ միայն ակտիվորեն մասնակցել քարոզարշավին, ամեն քայլափոխի շրջել Տիգրան Ավինյանի հետ, այլ նաեւ մարդաքանակ ապահովել նախընտրական քարոզարշավների ժամանակ, որպեսզի համոզեն, որ իրենք Երեւանում իսկապես մեծ ընտրազանգված ունեն: Այլ կերպ ասած, ՔՊ-ականները քարոզարշավ են անում իրենց ծանոթ-բարեկամներով՝ տպավորություն ստեղծելով, թե քարոզարշավը մարդաշատ է:

«Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանից հետաքրքրվեց՝ արդյոք ինքն արդեն նման հրահանգ ստացել է, եւ ինչ քայլեր է անում քաղաքական իշխանության պահանջները բավարարելու համար:

«Այդպիսի հրահանգ չկա, բայց կա կուսակցության վարչության որոշում՝ քարոզարշավին ակտիվորեն մասնակցելու համար: Կուսակցական ես, պատգամավոր ես, թե այլ պաշտոնյա, կապ չունի, պետք է մասնակցես քարոզարշավին, բայց հրահանգ չկա մարդիկ բերելու: Արհեստականության էլեմենտը մեզ մոտ հավասար է զրոյի»-ասաց նա:

Այսպիսով, ողջ պետական ապարատը լծված է քարոզարշավին, ինչպես մերժված նախկինում:

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի խորհրդական Տաթեւիկ Կարապետյանն իր անունով որեւէ շարժական կամ անշարժ գույք չունի: Ամեն դեպքում, այս մասին է վկայում նրա ներկայացրած հայտարարագիրը: Նախ՝ նշենք, որ Տաթեւիկ Կարապետյանն Ուկրաինայում ՀՀ դեսպան, Նիկոլ Փաշինյանի նախկին մամուլի խոսնակ Վլադիմիր Կարապետյանի դուստրն է: Վերջինս եւ Վահագն Խաչատուրյանը բավական մտերիմ են եղել դեռ ՀԱԿ անդամ լինելու տարիներից, եւ, թերեւս, այդ հանգամանքից ելնելով էլ՝ նշանակվել է նախագահի խորհրդական: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթն ուսումնասիրել է նրա հայտարարագիրը: Վերջինս 2022 թվականի վերջին իր բանկային հաշիվներին ունեցել է 10 հազար դոլար եւ 5 մլն դրամից ավելի գումար, իսկ որպես կանխիկ դրամ հայտարարագրել է 4.5 մլն դրամ: Մեկ տարվա ընթացքում Կարապետյանը վաստակել է 8 մլն 301 հազար դրամ, որից 7 մլն դրամից ավելին աշխատավարձ է, որը նա ստացել է նախագահի աշխատակազմից, իսկ մյուս մասն էլ կրկին աշխատավարձ է՝ «Նոր լրատվական»-ից եւ «Ջավեն Հակոբյան»-ից: Տաթեւիկը նաեւ վարկ ունի, որը տարեվերջին կազմել է 500 հազար դրամ: Այլ տվյալներ նրա հայտարարագրում առկա չեն: Հավելենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ 2020 թվականին գրել էր, թե ինչ սկանդալի պատճառով Փաշինյանն ազատեց Կարապետյանին աշխատանքից: Բանն այն է, որ նույն թվականին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն Ամանորի ուղերձը կարդացել էր սուֆլյորից՝ նույն նախադասությունը կրկնելով երկու անգամ, ինչն էլ դարձել էր ներիշխանական մեծ «ռազբորկաների» առիթ, եւ հենց այս պատճառով էլ աշխատանքից հեռացվել էր վարչապետի խոսնակ Վլադիմիր Կարապետյանը:



ՀՀ մշտական բնակչության թվաքանակն աճել է՝ թերեւս ՀՀ մշտական բնակություն հաստատած ռուսների եւ ուկրաինացիների հաշվին: Պաշտոնական աղբյուրներից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ մարզերի եւ մայրաքաղաք Երեւանի բնակչությունը 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 2 մլն 985 հազար մարդ, նախորդ տարի՝ 2022 թվականին՝ 2 մլն 961 հազար մարդ: Ըստ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալների՝ 2 մլն 985 հազար մարդուց 1 մլն 101 հազարը բնակվում են Երեւանում: Վայոց ձորն այն մարզն է, որտեղ ամենաքիչ բնակիչներն են՝ 48.1 հազար մարդ, ամենաշատ բնակչությունն ունի Արմավիրի մարզը՝ 267.6 հազար դրամ: Երկրորդ տեղում Արարատի մարզն է՝ 257.3 հազար մարդ: Բնակչության ընդհանուր թվից 1 մլն 902 հազարը քաղաքային բնակչությունն է, 1 մլն 082 հազարը՝ գյուղական:

Մինչ ավագանու ընտրություններին մասնակից 14 քաղաքական ուժերը ջանում են երեւանցիների սիրտը շահել, նոր ու գրավիչ խոստումներ տալ նրանց, հանդիպումներ կազմակերպել, որպեսզի մայրաքաղաքի բնակիչների վստահությունը շահեն, Երեւանի նախկին քաղաքապետ, դերասան Հայկ Մարությանը շարունակում է խորհրդավոր դռնփակ հանդիպումների ձեւաչափը: Նախկին քաղաքապետը դեռ երեւանցիներին չի ներկայացրել իր նախընտրական ծրագրը, մինչ օրս անգամ կարգախոս չի ներկայացրել: Հայկ Մարությանը, քարոզարշավի օրը դուրս գալու ու երեւանցիների հետ շփվելու փոխարեն, նախընտրել է քարոզարշավի մեկնարկի օրն իր թիմակիցների հետ միջոցառում կազմակերպել՝ դրամահավաք երեկո, որն անգամ փակ է եղել լրատվամիջոցների համար: Թեեւ տեղին է հիշել, որ իր պաշտոնավարման օրոք էլ Հայկ Մարությանը, լինելով քաղաքապետ, փակ էր մայրաքաղաքի բնակիչների ու լրատվամիջոցների համար: Շատ հաճախ արձակուրդում էր: Թերեւս Մարությանը կամ այնքան է վստահ իր վարկանիշի վրա, որ քարոզարշավի անհրաժեշտություն չի տեսնում, կամ էլ կաշկանդվում է երեւանցիների ու լրատվամիջոցների հետ շփումներից: Համենայնդեպս, մինչ օրս դա են փաստում նրա քայլերը:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՔՊ ՇՏԱԲՈՒՄ

Երեկվանից մեկնարկել է Երեւանու քաղաքապետի թեկնածուների քարոզարշավը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շտաբի պետ Արմեն Փամբուխչյանը, նրա տեղակալները եւ պատգամավորները կուսակցության նախընտրական քարոզարշավի հետ կապված աշխատանքներն են համակարգում, ակտիվորեն քննարկումներ անցկացնում:

-Աշխատանքները գրեթե ավարտական փուլում են, ներկա պահին ընթանում են շտաբների կահավորման աշխատանքները, քարոզչանյութերը ունենք: Մասնակցելու ենք երկու տարբերակով՝ առաջինը՝ թեկնածուի ներգրավվածությամբ, եւ մյուսը՝ առանց նրա:

Թեկնածուի ներգրավվածությամբ քարոզարշավների դեպքում պարբերաբար՝ ամենօրյա ռեժիմով, մենք կներկայացնենք, թե որ վարչական շրջանում ենք լինելու, արդեն ունենք սցենարները, թե որ հասցեներով ենք շրջելու: Շրջելու ենք գրեթե բոլոր հասցեներով հնարավորության դեպքում, ինչքանը որ հասցնենք: Մեր խոսակցությունը ժողովրդի հետ է եւ նրանց հետ էլ շփվելու ենք:

Քարոզարշավի այն տարբերակը, որում հանդես չի գա թեկնածուն, տվյալ տարածքային կառույցը՝ վարչական շրջանի շտաբը, մեր ակտիվի եւ ավագանու թեկնածուների հետ, ինչպես նաեւ մեր պատգամավորների հետ միասին իրականացնելու են քարոզարշավ:

-Վարչապետն անձամբ մասնակցելո՞ւ է քարոզարշավին, շրջելո՞ւ է Երեւանով:

-Ներկա պահին նման որոշում չունի շտաբը: Վարչապետի մասնակցության մասին ոչինչ ասել չեմ կարող, բայց թիմի մնացած բոլոր անդամները ներգրավված են լինելու շտաբային աշխատանքներին եւ քարոզարշավին:

-Պարոն Փամբուխչյան, տարբեր հարցումներ ցույց են տալիս, որ երեւանցիները անտարբեր են Երեւանի քաղաքապետի ընտրությունների նկատմամբ եւ չեն ցանկանում մասնակցել ընտրություններին: Դուք՝ որպես իշխող քաղաքական ուժ, ի՞նչ եք անելու, որ երեւանցիները մասնակցեն ընտրություններին:

-Ինչը որ արվում է սովորաբար. մենք պետք է քարոզարշավ անենք, մեր կատարած աշխատանքը ցույց տանք, խոսենք կատարվելիք աշխատանքի մասին, քանի որ մեկը մյուսի հետ շատ սերտ փոխկապակցված է, եւ ես ունեմ վստահություն, որ երեւանցին, տեսնելով մեր կատարած աշխատանքը, կգա եւ կմասնակցի ընտրություններին, որպեսզի այդ աշխատանքը լինի շարունակական, եւ մեր կարգախոսն էլ պատահական չէ ընտրված՝ «Ասե՛ք, կանենք»: Մենք գնալու ենք, խնդրենք քաղաքացիներին, որպեսզի ասեն, եւ մենք հետագայում անենք:

-Ո՞ր թեկնածուին եք համարում ձեզ հիմնական մրցակից:

-Բոլորին հավասարաչափ վերաբերվում ենք:

-Պարոն Փամբուխչյան, ձեր քաղաքական ուժին եւ թեկնածուին՝ Տիգրան Ավինյանին ուղղված հիմնական մեղադրանքն այն է, որ, դեռ պաշտոնական քարոզարշավը չմեկնարկած, նա էր վարում ավագանու նիստերը, տարբեր միջոցառումների էր ներկայանում, շրջում էր Երեւանում, հանդիպում քաղաքացիների հետ, եւ սա համարում են իշխանական լծակների օգտագործում: Ինչպե՞ս կմեկնաբանեք սա:

-Ես ուզում եմ հիշեցնել, որ Տիգրան Ավինյանը հանդիսանում է Երեւանի քաղաքապետի տեղակալ եւ լինելով տեղակալ՝ նա իրականացնում է իր ամենօրյա աշխատանքը: Պետք է հարց առաջանար այն պարագայում, երբ նա՝ որպես տեղակալ, իր լիազորությունները չկատարեր: Իսկ նա կատարել է իր աշխատանքը, եւ որոշվել է, որ նա մեր թեկնածուն է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԸ

2023 թվականի հունվարի 3-ին Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի տեղակալ է նշանակվել Արաքսիա Սվաջյանը:

Մինչ նախարարի տեղակալ դառնալը Սվաջյանը Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն է եղել: Նախարար դառնալուց հետո նախկին հաստիքը «նվիրել է» ընկերուհուն՝ Լիլիթ Մնացականյանին, թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության տնօրենի պաշտոնն էլ՝ իր ընկեր Գոռ Մսրիկյանին:

Նախարարությունում հայտնվելուն պես Սվաջյանն իր մտերիմներին պաշտոններ է տալիս: Օրինակ՝ փոխնախարարը պաշտոնը ստանձնելուց ամիսներ անց իր մտերիմ Թամարա Սարգսյանին նշանակել է ԿԳՄՍ հանրակրթության վարչության պետ: Վերջինս Սվաջյանի եւ Ժաննա Անդրեասյանի հետ մտերմություն ունենալու շնորհիվ է պաշտոնի եկել:

Մինչ նախարար դառնալը՝ 2016 թվականին, Սվաջյանը Կենտրոն վարչական շրջանում գտնվող բազմաբնակարան շենքում ձեռք է բերել բնակարան, իսկ 2020 թվականին եւս մեկ բնակարան է գնել բազմաբնակարան շենքում: 2022 թվականին Սվաջյանը ձեռք է բերել 2014 թվականի արտադրության Mazda մակնիշի ավտոմեքենա: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 453 հազար դրամ եւ 346 եվրո:

Սվաջյանի հայտարարագրում այլեւս ոչ մի բաժին լրացված չէ:

Հայտարարագիր լրացնելու ժամանակ Սվաջյանն արդեն իսկ նախարարի տեղակալ էր, եւ նույնիսկ այդ շրջանի եկամուտների մասին ոչինչ չկա:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ

Գագիկ Ծառուկյանն երեկ հանդիպել է ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին:

Գագիկ Ծառուկյանը Լեւոն Տեր-Պետրոսյանին շնորհավորել է Անկախության հռչակագրի ընդունման 33-ամյակի առթիվ՝ կարեւորելով նրա դերակատարումը 3-րդ հանրապետության կայացման գործում: Շուրջ մեկ ժամ տեւած ջերմ առանձնազրույցի ընթացքում զրուցակիցներն անդրադարձել են շրջափակման մեջ գտնվող Արցախում տիրող իրավիճակին, Հայաստանի ներկայիս խնդիրներին եւ դրանց լուծման ուղիներին: Կողմերը երկուստեք կարեւորել են երկրում առկա խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ համազգային համերաշխության ու միասնականության գործոնը:

Հանդիպումը տեղի է ունեցել ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի տանը:

ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Երեկվանից՝ օգոստոսի 23-ից, մեկնարկել է սեպտեմբերի 17-ին կայանալիք Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավը:

Քաղաքապետի 14 թեկնածուները օրեր շարունակ կշրջեն Երեւանի տարբեր վարչական շրջաններով, կներկայացնեն իրենց ծրագրերը ու կփորձեն համոզել երեւանցիներին ընտրել հենց իրենց:

Երեւանի փողոցները կողողվեն քարոզարշավի պաստառներով, նոր կարգախոսներով եւ նոր խոստումներով:

Այս ընթացքում քաղաքական ուժերը ջանք ու եռանդ չեն խնայելու՝ երեւանցիների սիրտը շահելու ու նրանց գրավիչ խոստումներ տալու: Իսկ թե, ի վերջո, որ ուժին կհաջողվի երեւանցիների վստահությունը շահել, պարզ կդառնա սեպտեմբերի 17-ին:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը պաշտոնի նշանակվել է 2021 թվականի սեպտեմբերի 8-ին: Մինչ պաշտոնի նշանակվելը եղել է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի նախագահ:

Մարզպետը քաղաքական դաշտ է եկել 2018 թվականի հեղափոխությունից հետո, «Իմ Քայլը» դաշինքի կողմից առաջադրվել էր Ազգային Ժողովի պատգամավորի թեկնածու: Սուրեն Պապիկյանի հովանավորյալ Սարգսյանը նախկինում Ռուսաստանի Դաշնությունում է եղել. ինչպես ընդունված է ասել բոլոր մարտունեցիների դեպքում, խոպան է գնացել: Հենց այդ տարիներին նա մի բնակարան է ձեռք բերել այնտեղ: Մարզպետը տրանսպորտային որեւէ միջոց չի հայտարարագրել, թեեւ 2022թ. հուլիսին հարբած ավտովթարի էր ենթարկվել Սեւան-Դիլիջան ճանապարհին:

Նշենք, որ Կարեն Սարգսյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 910 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 12 մլն 500 հազար դրամ: Կարեն Սարգսյանը հայտարարագրել է 16 մլն 524 հազար դրամ տարեկան եկամուտ, որից 12 մլն 790 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմից: Մյուս եկամուտների աղբյուրը թաքցվում է:

Մարզպետը նաեւ հիպոտեկով բնակարան է ձեռք բերել, իսկ նրա ստացած վարկերի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 20 մլն 301 հազար դրամ:

Հիշեցնենք, որ 2022 թվականի հուլիսի 25-ին ավտովթար էր տեղի ունեցել Կոտայքի մարզում: Երեւան-Սեւան ավտոճանապարհի 26 կմ հատվածում բախվել էին Գեղարքունիքի մարզպետ, 38-ամյա Կարեն Սարգսյանի վարած Mercedes մակնիշի, 01 QA 110 համարանիշի եւ Վարդան Թովմասյանի վարած Volkswagen մակնիշի, 36 TT 011 համարանիշի ավտոմեքենաները:

Վթարի հետեւանքով, ըստ նախնական տեղեկությունների, բարեբախտաբար, տուժածներ չեն եղել: Վարորդները ենթարկվել են սթափության փորձաքննության: Պարզվել է՝ Mercedes-ի վարորդը՝ Կարեն Սարգսյանը, եղել է ոչ սթափ վիճակում:

ԻՆՉՈ՞Ւ ՉՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ

Օգոստոսի 21-ին Հայ առաքելական եկեղեցին նշում էր Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքի ծննդյան 72-րդ տարեդարձը: Բազում շնորհավորանքներ են հնչել Կաթողիկոսի պատվին, սակայն իշխանության որեւէ ներկայացուցիչ այդպես էլ հանրայնորեն շնորհավորանքներ չի հնչեցրել:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձել է կապվել ՀՀ ԱԺ նախագահի, ՀՀ վարչապետի եւ ՀՀ նախագահի մամուլի խոսնակների հետ՝ շշնորհավորելու պատճառներն իմանալու համար:

ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի խոսնակ Ծովինար Խաչատրյանն այս հարցին պատասխանեց. «ՀՀ ԱԺ նախագահը Կաթողիկոսի ծննդյան տարեդարձը միշտ էլ շնորհավորել է եւ այս տարին եւս բացառություն չէ» :

Նույն հարցին ՀՀ նախագահի հասարակայնության հետ կապերի վարչության պետ Աղասի Մարգարյանը պատասխանեց. «Եթե լինում է պաշտոնական շնորհավորանք, մենք հրապարակում ենք, եթե չկա, չի եղել: Գուցե նախագահն անձնապես է շնորհավորել, ես դրա մասին տեղեկություն չունեմ: Եթե լիներ, պաշտոնական հրապարակված կլիներ»:

«Ժողովուրդ» օրաթերթի բազմաթիվ զանգերին ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը չպատասխանեց:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ԱՂԵՏ Է

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի օգոստոսի 16-ի հրատապ նիստում Արցախի շրջափակման վերաբերյալ քննարկումը ոչինչ չի տվել: Այս մասին ասել է ԱՄՆ ներկայացուցիչների պալատի անդամ Ադամ Շիֆը:

«Արցախում աղետ է: Այսօր 120 հազար բնակիչ զրկված է սննդամթերքի, դեղորայքի եւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների մատակարարումից, ինչի հետեւանքով արդեն մահվան դեպքեր են գրանցվում»,- ասել է կոնգրեսականը:

Նա հիշեցրել է, որ Արցախում ապրող հայերը շարունակում են մնալ շրջափակման մեջ, քանի որ Ադրբեջանը փակել է Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, եւ կոչ է արել հրատապ արձագանքել ստեղծված իրավիճակին:

«Անհրաժեշտ է բանաձեւ, որը կպահանջի դադարեցնել միջազգային իրավունքի այս խախտումը, անհրաժեշտ է ապահովել պարենի եւ դեղորայքի անարգել մատակարարումը, ինչպես նաեւ մարդկանց ազատ տեղաշարժը: Պետք է դադարեցնեն ռազմական օգնությունն Ադրբեջանին եւ հավաստիանան, որ ապօրինի շրջափակումը կդադարեցվի: Ադրբեջանին ոչ մի կոպեկ պետք չէ տրամադրել, համենայնդեպս՝ հիմա, երբ այդ աղետը շարունակվում է:»,- հայտարարել է կոնգրեսականը:

Նա հիշեցրել է, որ Ադրբեջանի սանձազերծած պատերազմում արդեն հազարավոր մարդիկ են զոհվել, Ադրբեջանը շարունակում է ապօրինի պահել ռազմագերիներին ՝խախտելով միջազգային իրավունքը. «Ես խորապես մտահոգված եմ հայերի նոր ցեղասպանության վտանգի առկայությամբ»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻՆ

ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը օգոստոսի 23-ին հեռախոսազրույց է ունեցել Շվեդիայի Թագավորության արտաքին գործերի նախարար Թոբիաս Բիլստրյոմի հետ:

ԱԳՆ մամուլի ծառայությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ Միրզոյանն իր գործընկերոջն է ներկայացրել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման, իսկ հունիսի 15-ից Լեռնային Ղարաբաղի լիակատար շրջափակման հետեւանքով ԼՂ-ում ահագնացող հումանիտար ճգնաժամի մանրամասները՝ ուշադրություն հրավիրելով հատկապես խոցելի խմբերի՝ երեխաների, կանանց, տարեցների եւ խրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց համար ստեղծված ծանրագույն պայմաններին, սննդի եւ դեղորայքի սուր պակասին: Արարատ Միրզոյանը նշել է նաեւ, որ վառելիքի բացակայության եւ ադրբեջանական կողմից թիրախավորման պատճառով դադարեցվել են գրեթե բոլոր գյուղատնտեսական աշխատանքները:

Անդրադառնալով ՄԱԿ Անվտանգության խորհրդի օգոստոսի 16-ի քննարկմանը՝ ընդգծվել է Արդարադատության միջազգային դատարանի որոշումներին համապատասխան Լաչինի միջանցքի՝ ԼՂ-ն Հայաստանի հետ կապող միակ ճանապարհի ապօրինի արգելափակումը վերացնելու հրատապությունը:

Շեշտվել է այդ ուղղությամբ առկա բոլոր մեխանիզմները, այդ թվում՝ ԵՄ եւ իր անդամ պետությունների կողմից արդյունավետորեն օգտագործելու կարեւորությունը՝ հաշվի առնելով, որ ԼՂ-ում մարդասիրական իրավիճակի շարունակական սրումը կարող է լուրջ հարվածի տակ դնել նաեւ տարածաշրջանում կայունության հաստատմանն ուղղված ջանքերը:

Ստեղծված անորոշության պայմաններում Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելը եւս հանդես է եկել կոչով: Մասնավորապես նա կոչ է անում հնարավորինս շուտ Բաքվի եւ Ստեփանակերտի միջեւ երկխոսության նպատակով հանդիպում անցկացնել: Այս մասին «Ազատությանը» փոխանցել է Եվրամիության բարձրաստիճան անանուն պաշտոնյան:

Եվրամիության պաշտոնյայի խոսքով՝ Սոֆիայում նախատեսված, սակայն չկայացած հանդիպումից հետո Ստեփանակերտ-Բաքու նոր հանդիպման հարցն այս պահին փակուղում է, ընդ որում՝նշել է, որ սեղանին որեւէ նոր առաջարկ չկա, ու առայժմ հայտնի չէ՝երբ եւ որտեղ կարող է կողմերի հաջորդ հանդիպումը կայանալ: Եվրոպացի պաշտոնյան պնդել է, թե Բրյուսելը շարունակում է մնալ անշահախնդիր ու անկեղծ միջնորդ Բաքվի ու Երեւանի միջեւ բանակցություններում:

«Նախագահ Միշելն ադրբեջանական կողմին շեշտել է Լաչինի ճանապարհը բացելու անհապաղ անհրաժեշտությունը՝ համապատասխան Միջազգային քրեական դատարանի կանոնադրության, եւ որպեսզի կանխվի հետագա լարվածությունը: Նա նաեւ ի գիտություն է ընդունում ադրբեջանական կողմի պատրաստակամությունը հումանիտար օգնություն տրամադրել այլ ճանապարհներով՝ ներառյալ Աղդամով», - հավելել է «Ազատության» աղբյուրը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՌՈՒԶԵՌ՝ ՔՊ ՇՏԱԲՈՒՄ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական շտաբում քարոզարշավի առաջին օրը եռուզեռ էր:

Շտաբի պետ Արմեն Փամբուխյանը, նրա տեղակալները եւ պատգամավորները կուսակցության նախընտրական քարոզարշավի հետ կապված աշխատանքներն էին համակարգում, ակտիվորեն քննարկումներ անցկացնում: ՔՊ նախընտրական շտաբը, որը գտնվում է Հյուսիսային պողոտայում, բավականին ընդարձակ է: Յուրաքանչյուրի համար առանձնացված աշխատանքային մի քանի սենյակներ կան եւ մեկ ընդհանուր սենյակ՝ քննարկումների համար:

«Ժողովուրդ» օրաթերթը եղել է ՔՊ նախընտրական շտաբում՝ հասկանալու, թե ինչ իրավիճակ է շտաբում:

Մեզ հետ զրույցում ՔՊ նախընտրական շտաբի պետ Արմեն Փամբուխյանը նշեց, որ քարոզարշավը մեկնարկել են Նուբարաշեն վարչական շրջանից, հաջորդը էրեբունին է:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԻՇՈՒՍՏԻՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Միշուստինն օգոստոսի 24-25-ը կայցելի Հայաստան՝ մասնակցելու Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին:

«Հանդիպման ընթացքում կառավարությունների ղեկավարները նախատեսում են քննարկել Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում միջնաժամկետ եւ երկարաժամկետ ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման հարցերը: Կողմերը կքննարկեն ԵԱՏՄ շրջանակներում իրավական մեխանիզմների հետագա կատարելագործումը, այլ երկրների հետ փոխգործակցության գոյություն ունեցող ձեւաչափերի ամրապնդումը եւ հնարավոր գործընկերների հետ կապերի հաստատումը», - մեջբերում է ՏԱՀ-ը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ միջոցառումը տեղի է ունենալու ԵԱՏՄ մարմիններում Ռուսաստանի նախագահության հովանու ներքո:

Միջոցառումը կանցկացվի Ծաղկաձոր լեռնային հանգստավայրում:

ԿԱՅՑԵԼԻ ՄԻՋԱՆՑՔ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին, որը Հայաստան է ժամանել ԵԱՀԿ գործող նախագահի՝ Լաչինի միջանցք այցելելու եւ առկա իրավիճակի մասին զեկուցելու հանձնարարականի շրջանակներում: Հանդիպման ընթացքում քննարկվել են տարածաշրջանի անվտանգությանն առնչվող հարցեր: Անդրադառնալով Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում խորացող հումանիտար ճգնաժամին՝ Արարատ Միրզոյանը շեշտել է միջազգային հանրության, այդ թվում՝ ԵԱՀԿ կողմից հրատապ եւ գործուն քայլերի հրամայականը՝ վերահաս հումանիտար աղետը եւ դրա անդառնալի հետեւանքները կանխելու նպատակով:

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Դատախազը 2023 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ նախկին գլխավոր հարկադիր կատարող Մ.Պ.-ի նկատմամբ հարուցել է նոր հանրային քրեական հետապնդում:

Մ.Պ.-ն մեղադրվում է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելու (փողերի լվացում), առանձնապես խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելու (հինգ դրվագ), պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ խոշոր չափերով վատնում կատարելու, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (երկու դրվագ) եւ պաշտոնեական լիազորություններն անցնելու համար:

Մասնավորապես, Մ.Պ.-ն, 2008 թվականի հունիսի 11-ից զբաղեցնելով ՀՀ դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը, իր թիկնապահ Է.Ս.-ին 2008 թվականի սեպտեմբերի 12-ին նշանակել է Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝Ծառայություն) հարկադիր կատարման օպերատիվ բաժնի առաջին կարգի խորհրդատու, սակայն Է.Ս.-ին հանձնարարել է ապահովել իր անձնական անվտանգությունը: Արդյունքում Է.Ս.-ն, 2008-2016 թվականներին փաստացի չկատարելով օպերատիվ բաժնի առաջին կարգի խորհրդատուի պաշտոնից բխող պարտականությունները, Մ.Պ.-ի հանձնարարությամբ ստացել է 22 մլն 117 հազար 820 դրամի չափով աշխատավարձ եւ դրան հավասարեցված վճարումներ:

Մեկ այլ դեպքում Մ.Պ.-ն իր անձնական վարորդ Հ.Բ.-ին 2009 թվականի նոյեմբերի 3-ին նշանակել է Ծառայության օպերատիվ բաժնի առաջատար խորհրդատուի պաշտոնում, սակայն Հ.Բ.-ին հանձնարարել է ապահովել իր անձնական անվտանգությունը: Արդյունքում 2009-2016 թվականներին Հ.Բ.-ն, փաստացի չկատարելով օպերատիվ բաժնի առաջատար խորհրդատուի պարտականությունները, Մ.Պ.-ի հանձնարարությամբ ստացել է 21 մլն 754 հազար 643 դրամ աշխատավարձ եւ դրան հավասարեցված վճարումներ:

Բացի այդ, Մ.Պ.-ն իր մորեղբոր որդուն՝ Տ.Հ.-ին, 2009 թվականի մարտի 2-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 16-ը Ծառայությունում տարբեր պաշտոնների է նշանակել: Գլխավոր հարկադիր կատարողի ազգականը հանդիսանալու հանգամանքով պայմանավորված՝ Տ.Հ.-ն ունեցել է արտոնյալ կարգավիճակ, փաստացի աշխատանքի չի հաճախել, չի կատարել իր ծառայողական պարտականությունները, սակայն ստացել է 2 մլն 470 հազար 827 դրամ աշխատավարձ եւ դրան հավասարեցված վճարումներ:

Մեկ այլ դեպքում Մ.Պ.-ն, տեղեկացված լինելով, որ Ա.Հ.-ն փաստացի կատարելու է ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնը զբաղեցրած Հ.Թ.-ի վարորդի պարտականությունները, առաջարկել է Ա.Հ.-ին պաշտոնի նշանակել Ծառայությունում ավելի բարձր աշխատավարձ ստանալու, հատուկ կոչում ձեռք բերելու եւ զենք ստանալու նպատակով: Մ.Պ.-ն 2011 թվականի ապրիլի 22-ին, 2012 թվականի հունվարի 15-ին ե 2013 թվականի հունվարի 8-ին աշխատանքային պայմանագրեր է կնքել Ա.Հ.-ի հետ՝ նրան ընդունելով աշխատանքի՝որպես Ծառայության անվտանգության աշխատակից: Ապա Մ.Պ.-ն 2013 թվականի ապրիլի 17-ին Ա.Հ.-ին նշանակել է Ծառայության տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման եւ համակարգի ավտոմատացման բաժնի առաջին կարգի խորհրդատուի պաշտոնին, նույն օրվա մեկ այլ հրամանով՝ գործուղել հարկադիր կատարման օպերատիվ բաժին, 2013 թվականի մայիսի 13-ի հրամանով՝Ա.Հ.-ին շնորհել է «Արդարադատության լեյտենանտ» կոչումը, 2014 թվականի փետրվարի 26-ի հրամանով՝փոխադրման կարգով նշանակել Երեւան քաղաքի Շենգավիթ բաժնի հարկադիր կատարողի պաշտոնին, ապա՝ 2014 թվականի փետրվարի 28-ի հրամանով՝ կրկին գործուղել հարկադիր կատարման օպերատիվ բաժին: Ա.Հ.-ն վերոնշյալ ժամանակահատվածում աշխատանքի չի հաճախել, սակայն ստացել է 5 մլն 712 հազար 550 դրամ աշխատավարձ եւ դրան հավասարեցված վճարումներ:

Բացի այդ, Մ.Պ.-ն իր մորեղբոր որդուն՝ Գ.Հ.-ին, Ծառայությունում տարբեր պաշտոնների է նշանակել: Գլխավոր հարկադիր կատարողի ազգականը հանդիսանալու հանգամանքով պայմանավորված՝ Գ.Հ.-ն ունեցել է արտոնյալ կարգավիճակ, աշխատանքի չի հաճախել, չի կատարել իր ծառայողական պարտականությունները, սակայն ստացել է 10 մլն 454 հազար 655 դրամ աշխատավարձ եւ դրան հավասարեցված վճարումներ:

Մեկ այլ դեպքում Մ.Պ.-ն 2013-2015 թվականների եւ 2016 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրեն սպասարկելու համար համապատասխան հրամաններով Ծառայության հաշվեկշռում գտնվող 4 ավտոմեքենաներն ամրակցել է իր անվտանգության աշխատակիցներ Հ.Բ.-ին, Ա.Ս.-ին, Է.Ս.-ին եւ Ա.Ի.-ին եւ մշտապես երթեւեկել վերոնշյալ ավտոմեքենաներից առնվազն երկուսով: Արդյունքում 2013-2015 թվականների եւ 2016 թվականի առաջին եռամսյակի ընթացքում գլխավոր հարկադիր կատարող Մ.Պ.-ն պետական բյուջեի եւ ՀՀ դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի տնօրինման տակ գտնվող ֆոնդի միջոցներից իրեն սպասարկող չորս ավտոմեքենաների համար հափշտակել է 40 մլն 746 հազար 500 դրամ: Բացի այդ, ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնելու ընթացքում Մ.Պ.-ն վստահված անձանց միջոցով մասնակցել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող «Քեթրին գրուպ», «Բեսթ ռեալթի», «Կեչառիս հոթել» եւ «Ֆրուտիմեքս» ՍՊ ընկերությունների կառավարմանը, ինչը կապված է եղել այդ կազմակերպություններին ի պաշտոնե արտոնություններ եւ առավելություններ տրամադրելու եղանակով հովանավորելու հետ: Պաշտոնատար անձ Մ.Պ.-ն ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու արդյունքում վերոնշյալ ընկերությունների գործունեության, ինչպես նաեւ «Քեթրին գրուպ» ՍՊ ընկերության եւ դրա հետ փոխկապակցված այլ կազմակերպությունների կողմից առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու հետեւանքով ձեռք բերած 1 մլն 190 հազար ԱՄՆ դոլարի ծագման իրական աղբյուրը թաքցնելու, խեղաթյուրելու եւ դրանց օրինական տեսք հաղորդելու նպատակով, դրանք ձեւակերպելով իբրեւ փոխառություն, փոխանցել է «Քեթրին գրուպ» ՍՊ ընկերության բանկային հաշվեհամարին, որոնք օգտագործվել են ընկերության ընթացիկ գործունեության, այդ թվում՝ վարկային պարտավորությունները մարելու համար:

Բացի այդ, 2013 թվականին Մ.Պ.-ն, չարաշահելով պաշտոնեական լիազորությունները, սահմանված կարգի խախտմամբ աճուրդ անցկացնելու պայմաններում, էական վնաս է պատճառել պահանջատեր Հ.Ա.-ի եւ Ռ.Հ.-ի իրավունքներին ու օրինական շահերին: Մասնավորապես՝աճուրդում 166 հատ տրանսպորտային միջոցներն իրացվել են ցածր գնով, պահանջատերեր Հ.Ա.-ն եւ Ռ.Հ.-ն զրկվել են կատարողական վարույթների շրջանակում պարտապանին պատկանող գույքի իրացումից հետո իրենց հասանելի 13 հազար 500 ԱՄՆ դոլարի եւ 87 հազար 500 ԱՄՆ դոլարի հատուցում ստանալուց եւ այլն:

Մեկ այլ դեպքում Մ.Պ.-ն, օրենքներով եւ այլ իրավական ակտերով չունենալով երրորդ անձի համար՝ Ծառայության կողմից բռնագանձման ենթակա գումարները վճարելիս ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից գանձված միջնորդավճարներից գումարներ ստանալու իրավասություն սահմանելու իրավուն, 2015 թվականի ամռանը հանձնարարել է ստեղծել եւ ներդնել բռնագանձման ենթակա վճարումներ ընդունող «ԴԱՀԿ վճարային համակարգ» ծրագրային ապահովումը: Այնուհետեւ Ծառայության (ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարող Մ.Պ.-ի) եւ Մ.Պ.-ի ու նրա մորեղբոր որդու՝ Գ.Հ.-ի կողմից փաստացի կառավարվող «Ագրոպոլյուս» ընկերության միջեւ 2015 թվականի հուլիսի 31-ին հինգ տարի ժամկետով կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր: Պայմանագրով «Ագրոպոլյուս» ընկերությանը իրավունք է վերապահվել ծառայությունների մատուցման ընթացքում վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով յուրաքանչյուր վճարման դիմաց վճարողներից գանձել 300 դրամ, իսկ հետագայում՝ 15.001 դրամը գերազանցող յուրաքանչյուր վճարման դիմաց՝ 500 դրամ միջնորդավճար: Արդյունքում 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ 2020 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ քաղաքացիներից եւ իրավաբանական անձանցից «միջնորդավճարի» անվան տակ, այդ գործընթացի հետ, ըստ էության, առնչություն չունեցող, Մ.Պ.-ի եւ նրա ազգականի կողմից փաստացի կառավարվող «Ագրոպոլյուս» ՍՊ ընկերությանը վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից վճարվել է 84 մլն 343 հազար 680 դրամ:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ հսկող դատախազը 2023 թվականի օգոստոսի 23-ին Մ.Պ.-ի նկատմամբ հարուցել է նոր հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով վստահված գույքը հափշտակելը) (հինգ դրվագ), 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (պաշտոնեական դիրքն օգտագործելով՝խոշոր չափերով յուրացումը կամ վատնումը), 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ) (երկու դրվագ), 309-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ) եւ 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելը (փողերի լվացումը)):

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ 28-ամյա տրանսգենդերին կյանքից զրկելու դրդապատճառը հայտնի է: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ քննությամբ պարզվել է, որ 28-ամյա տրանսգենդերը սպանության գործով ձերբակալված տղային պարտք է եղել, ու նրանց միջեւ պարտք ու պահանջի խոսակցություն է եղել: Ավելին՝ քննությամբ պարզվել է, որ սպանվածն ու ձերբակալվածը «Կրիստալ» թմրանյութի ձեռք բերման ու իրացման գործընթացի մեջ են եղել: Ի դեպ, օգոստոսի 23-ին նախաքննական մարմինը դիմել է դատարան՝ 28-ամյա տրանսգենդերին կյանքից զրկած երիտասարդին կալանավորելու միջնորդությամբ:

Հիշեցնենք, որ օգոստոսի 20-ին՝ ժամը 17.04-ին, 911 ծառայությունից ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ Կողբացու փողոցի շենքերից մեկի մի բնակարանում հրդեհ է: Նշված հասցե մեկնած ՆԳՆ փրկարար ծառայության աշխատակիցները հրդեհաշիջման աշխատանքներ կատարելուց հետո հայտնաբերել են դիակ: Նշված հասցե օպերատիվ-քննչական խումբ է մեկնել: Դիակի վրա կտրած-ծակած վնասվածքներ են հայտնաբերվել: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվել է դիակի ինքնությունը՝ Արմավիրի մարզի 28-ամյա բնակիչ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՆԽՎԵԼ Է ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչությունում ստացված օպերատիվ տվյալների իրացման շրջանակներում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել եւ կանխվել է Իրանի Իսլամական Հանրապետությունից մաքսանենգ ճանապարհով Հայաստանի Հանրապետություն առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց տեղափոխելու դեպք: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական համալիր միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացիներ Հ.Ղ-ն եւ Ա.Ղ-ն Իրանի Իսլամական Հանրապետության ինքնությունը դեռեւս չպարզաբանված մի քաղաքացու հետ միասին, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, միմյանց գործողությունները փոխլրացնելով, պատրաստվում են Երեւան-Եղեգնաձոր միջպետական ճանապարհին գտնվող թաքստոցից իրացնելու նպատակով ձեռք բերել Իրանի Իսլամական Հանրապետությունից մաքսանենգ ճանապարհով Հայաստանի Հանրապետություն ներկրված առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության պայմաններում Հ.Ղ-ն եւ Ա.Ղ-ն ձերբակալվել են:

Ավտոմեքենան տեղափոխվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արտաշատի բաժնի հատուկ պահպանվող տարածք, որտեղ իրականացված քննչական գործողությունների արդյունքում հայտնաբերվել է մոտ կես կիլոգրամ ընդհանուր քաշով «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցով լցված փաթեթ: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 393 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 396-րդ հոդվածի 3-րդ մասով, 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ, Հ.Ղ-ն եւ Ա.Ղ-ն կալանավորվել են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝օգոստոսի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 48 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՋԱՐԴՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ «ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ»

Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի բնակիչները ահազանգում են, որ զբոսաշրջային քաղաքի ամենակենտրոնը վերածվել է ոստիկանության Դիլիջանի բաժնի շենքի մոտ կայանած, վթարների հետեւանքով ջարդված ավտոմեքենաների «ցուցահանդեսի»: Մյասնիկյան փողոցում՝ ոստիկանության Դիլիջանի բաժնի շենքի դիմաց՝ «Ծիրան», «Նյու Սիթի» հանրախանութների, Դիլիջանի կենտրոնական դեղատան, «VivaCell»-ի Դիլիջանի գրասենյակի հատվածում առկա տարածքը ՀՀ ոստիկանությունը դարձրել է «Տուգանային հրապարակ», դրան ավելացրած՝ քաղաքի կենտրոնական ճանապարհին մշտապես երկկողմանի կայանած թվով 12-15 մարդատար եւ բեռնատար մեքենաները խոչընդոտում են երթեւեկությանը: Նման իրավիճակում պարեկային ծառայությունը չի զլանում բարձրախոսներով «սպառնալիքներ» հնչեցնել կայանած ավտոմեքենաների պատճառով ստիպված ավտոճանապարհի 2-րդ գիծ կայանած վարորդներին: Այս ամենին գումարվում է վերոհիշյալ սուպերմարկետների հաճախորդների՝ ավտոմեքենաներով հոսքը, ուստի նշված հատվածում մշտապես առաջանում են տրանսպորտային խցանումներ:

Դիլիջան քաղաքի բնակիչները բողոքում են, որ ոստիկանության Դիլիջանի բաժնի տուգանային հրապարակում կայանած ավտոմեքենաների պատճառով քաղաքի կենտրոնը վերածվել է ավտոմեքենաների գերեզմանոցի, վթարված մեքենաների տեսքը տգեղ է, այդ ավտոմեքենաներից տարածվող զզվելի հոտը տհաճ անակնկալ է Դիլիջան քաղաք այցելող արատասահմանցի եւ հայաստանցի հազարավոր զբոսաշրջիկների համար:

Դիլիջանցիները ասում են, որ նշված հատվածում մշտապես կայանած ավտոմեքենաների պատճառով «Ծիրան» եւ «Նյու Սիթի» հանրախանութներ այցելած գնորդները իրենց ավտոմեքենան կայանելու համար շուրջ կես ժամ ազատ տեղ են որոնում, իսկ «Նյու Սիթի» սուպերմարկետի առաջ գտնվող տարածքը մշտապես զբաղեցնում են այդտեղ կայանած դիլիջանցի տաքսիստները:

Դիլիջանի քաղաքապետարանի շենքի կողքին գտնվող անցումի վրա կայանած է ավտոմեքենայի «շառավոյը» ջարդած ավտոմեքենա: Դիլիջանի բնակչուհի Էմմա Վարդանյանը հայտնում է, որ ինքը գնացել է ոստիկանության Դիլիջանի բաժին եւ բաժնի աշխատակիցներին հարցրել, թե ինչու են ջարդված ավտոմեքենաները կայանած քաղաքի կենտրոնում: Բաժնի ոստիկանները պատասխանել են, որ դա օրինական է:

Դիլիջանի բնակիչներից շատերը տուրիստական քաղաքի ամենակենտրոնում տիրող նման վատ իրավիճակի համար մեղադրում են վիճակն իր աշխատասենյակից տեսնող, սակայն իրավիճակին չարձագանքող, Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին եւ ոստիկանության Դիլիջանի բաժնի ղեկավարությանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ՝ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Արարատի մարզպետարանում անցկացվել է 2023-2024 ուսումնական տարվա օգոստոսյան խորհրդակցությունը:

Կրթական համակարգի բարեփոխումների, նոր ուսումնական տարվանից կիրառվելիք նորարարական մոտեցումների վերաբերյալ քննարկմանը մասնակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, Արարատի մարզպետ Սեդրակ Թեւոնյանը, նախարարության եւ մարզպետարանի պաշտոնատար անձինք, ԿՏԱԿ-ի, ԿՁՆԱԿ-ի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ մարզի դպրոցների եւ նախադպրոցական հաստատությունների տնօրեններ:

Խորհրդակցությանը քննարկվել են 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրմանն առնչվող մի շարք հարցեր, որոնք, մասնավորապես, վերաբերել են ուսուցիչների վերապատրաստմանը եւ նոր դասագրքերի ստեղծմանը:

Արաքսիա Սվաջյանը նշել է, որ որոշ դասագրքեր փորձաքննության արդյունքում երաշխավորվել են, սակայն մի քանի դասագրքերի վերաբերյալ կան բողոքարկումներ, որոնք ուղարկվել են լրացուցիչ փորձաքննության:

«Պետք է վստահ լինենք, որ այս կամ այն դասագիրքը, որը երաշխավորվել կամ չի երաշխավորվել, հիմնավոր է: Պետք է վստահ լինենք, որ դպրոց մտնող ցանկացած դասագիրք իսկապես համապատասխանում է բոլոր սահմանված չափանիշներին»,- նշել է նախարարի տեղակալը՝ հավելելով, որ դասագրքերը տպագրման փուլում են:

Նշվել է նաեւ, որ սեպտեմբերից մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցների, ինչպես նաեւ Հայաստանում ԲՏՃՄ առարկաների (բացառությամբ մաթեմատիկական առարկաներ դասավանդողների) ուսուցիչները կստանան հավելավճար:

Քննարկվել են նաեւ պարտադիր եւ կամավոր ատեստավորմանը, ֆինանսավորման նոր մոդելի ներդրմանը, համընդհանուր ներառական կրթության կազմակերպմանն առնչվող հարցեր:

«Դպրոցն այն միջավայրն է, որը ոչ միայն գիտելիքներ, հմտություններ պետք է տա երեխաներին, այլեւ արժեքներ պետք է ձեւավորի, ապահովի անվտանգ միջավայր, որտեղ երեխաները կկարողանան արդյունավետ ուսումնառություն իրականացնել: Ցավոք, դպրոցներում համընդհանուր ներառման հետ կապված խնդիրներ կան, եւ այդ ուղղությամբ պետք է աշխատանք տանենք»,- նշել է Արաքսիա Սվաջյանը եւ հավելել, որ առաջիկա սեպտեմբերից ներդրվող ֆինանսավորման նոր մոդելով բոլոր դպրոցներում պարտադիր է լինելու հոգեբանի հաստիքը:

Առանձին խորհրդակցություն է անցկացվել նաեւ նախադպրոցական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ:

Նախարարի տեղակալը ներկայացրել է պարզաբանումներ նախադպրոցական կրթության համակարգի բարեփոխումների վերաբերյալ: Այս համատեքստում նշվել է, որ ներդրվել է ղեկավարման իրավունքի հավաստագրման համակարգ: Ըստ այդմ՝ նախադպրոցական հաստատությունների տնօրենների հավակնորդները պետք է հանձնեն հավաստագրման քննություններ, ձեռք բերեն ղեկավարման իրավունքի հավաստագիր: Նախադպրոցական հաստատությունների այն տնօրենները, որոնք աշխատում են աշխատանքային անժամկետ պայմանագրերով, մինչեւ 2024 թվականի հունիսի 1-ը պետք է հասցնեն ձեռք բերել ղեկավարման իրավունք: Տնօրենների հավակնորդների հավաստագրման գործընթացը կազմակերպում է ԿԳՄՍ նախարարությունը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստման եւ ատեստավորման, ներառական կրթության համատեքստում ձեռնարկվելիք միջոցառումներին առնչվող մի շարք այլ հարցեր: Խորհրդակցության ավարտին նաեւ հարց ու պատասխան է անցկացվել:

ԳԱՎԱՌ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ ԿԱՇԱՌՔ Է ՎԵՐՑՐԵԼ

ՀՀ ֆինչական կոմիտեի հասկապես կարեւոր գործերի ֆինության գլխավոր վարչությունում ավարտվել է ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Գավառի սոցիալական ապահովության տարածքային բաժնի նախկին պետի կողմից շուրջ 4 տասնյակ քաղաքացիներից կաշառք ստանալու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել եւ հիմնավորվել է, որ ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Գավառի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետը, 2014-2019թթ. զբաղեցնելով հիշյալ պաշտոնը, իրավասու լինելով նշանակել ու վերահաշվարկել կենսաթոշակները եւ նպաստները, իրեն ի պաշտոնե դիմած շուրջ 4 տասնյակ քաղաքացիներից պահանջել եւ ստացել է տարբեր չափերի կաշառք՝ իր իշխանական եւ ծառայողական լիազորություններն ու դրանով պայմանավորված ազդեցությունը օգտագործելով, աշխատանքային ստաժի տարիները պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ավելացնելու, քաղաքացիների կենսաթոշակը, 65 տարեկանը լրանալու փոխարեն, 63 տարեկանից ձեւակերպելու, աշխատանքային ստաժը ավել գրի առնելու միջոցով կենսաթոշակը բարձր ձեւակերպելու, որոշ անձանց իրեն ենթակա ստորաբաժանումում աշխատանքի ընդունվելու գործընթացը կազմակերպելու, տարիներ շարունակ կենսաթոշակը վճարված չլինելու հիմքով դադարեցված հաշմանդամության, ինչպես նաեւ կուտակված կենսաթոշակները միանվագ տրամադրելու եւ վերականգնելու, ապագայում ստացվելիք կենսաթոշակը բարձր ձեւակերպելու նպատակով քաղաքացիների աշխատանքային գրքույկում ակնհայտ ապօրինի կեղծ տեղեկություններ ներառելու գործողություններ կատարելու դիմաց:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Գավառի սոցիալական ապահովության տարածքային բաժնի նախկին պետին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ), 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (32 դրվագ), 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով եւ 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ): Կաշառք տալու համար մեղադրանքներ են ներկայացվել նաեւ վերոնշյալ քաղաքացիներից 5-ին: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Հիշյալ մեղադրյալների վերաբերյալ նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿԱՐԵՎՈՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ միայն այս տարվա ընթացքում, ընտանիքում երրորդ եւ հաջորդ երեխաների ծննդով պայմանավորված, 50,000 դրամ աջակցություն է նշանակվել ավելի քան 7340 երեխայի:

Ծրագրի մեկնարկից մինչ այժմ աջակցություն է նշանակվել ընտանիքում երրորդ եւ հաջորդ ավելի քան 17000 երեխայի: Այս մասին տեղեկացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

Հիշեցնենք, որ աջակցությունը տրամադրվում է մինչեւ երեխայի 6 տարեկան դառնալը: Այն նշանակվում է, եթե երեխան ծնվել է 2022 թ. հունվարի 1-ին կամ հետո, աջակցության համար դիմող երեխայի ծնողը ՀՀ քաղաքացի է, դիմելու օրվա դրությամբ ծնողը եւ նոր ծնված երեխան գտնվում են Հայաստանի Հանրապետությունում կամ դիմելու օրվա դրությամբ ծնողը, նոր ծնված երեխան եւ երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխաները հաշվառված են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում:

ԴԵՂՈՐԱՅՔԸ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի Հանրապետություն վերջին անգամ դեղորայք է մատակարարվել հուլիսի 7-ին: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ԱՀ ԱԳՆ թվիթերյան էջից:

Արցախի ԱԳՆ-ն, արձագանքելով Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւի տարածած ապատեղեկատվությանը, գրել է, որ մինչ Հիքմեթ Հաջիեւը ջանք չի խնայում «ապացուցելու»՝ իբրեւ թե, «Լաչինի միջանցքը բաց է», միջազգային հանրությունը պատասխանում է ԿԽՄԿ-ի հայտարարությամբ այն մասին, որ Լեռնային Ղարաբաղ վերջին անգամ դեղորայք է մատակարարվել հուլիսի 7-ին, իսկ պարենի վերջին մատակարարումը տեղի է ունեցել հունիսի 14-ին:

ՀՈՒՇԱԴՐԱՄԸ՝ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2023 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ կենտրոնական բանկը շրջանառության մեջ է դրել «Ազգային դրամի 30 տարին» արծաթե հուշադրամը: Այս մասին հաղորդում են ԿԲ-ից:

«Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ դրամը, անկախ պետականության խորհրդանիշներից է: Դրամը շրջանառության մեջ է դրվել 1993 թվականի նոյեմբերի 22-ին:

ՀՀ դրամի գոյության 30 տարիների ընթացքում թողարկվել են շրջանառու թղթադրամների եւ մետաղադրամների մի քանի շարքեր, ինչպես նաեւ դրամանիշերի այլ տեսակներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում հավաքորդների շրջանում՝ շրջանառու հիշատակային մետաղադրամներ, հավաքորդական թղթադրամներ, հուշադրամներ, ներդրումային դրամներ»,- ասվում է ԿԲ հաղորդագրության մեջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Գ

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեւ նշված շարժական գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 14.09.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 2 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2004թ. արտադրության, 632 US 65 պետհամարանիշով, նարնջագույն, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝WMAH13ZZ15M400073, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 5,686,200 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝6,488,100 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 6,561,000 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի,

TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝ կարմիր, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 6,196,500 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (էլ. Փոստ՝ makaryeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Էլեկտրոն» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք? Երեւան, Շենգավիթ, Շարուրի փողոց, 37/37 հասցեում գտնվող 4811,68 ք.մ. ինժեներական մասնաշենք, 2306,78 ք.մ. վարչական մասնաշենք, 65,51 ք.մ. պահեստ, 423,41 ք.մ. վարչական մասնաշենք, 673,9 ք.մ. լաբորատորիա, 28,7 ք.մ. /71,75 խ.մ./ պարիսպ, 31,59 ք.մ. ինքնակամ շինություններ եւ 0,68233 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 824540000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝դասական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 11.09.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1,5%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայքը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՆՔ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը 2023 թվականին նշում է հիմնադրման 90-ամյակը: Այն աշխարհում գործող փոքրաթիվ գրադարաններից է, որը նախատեսված է սպասարկելու մանուկներին եւ պատանիներին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ գրադարանն իրականացնում է տեղեկատվական, մշակութային, գրադարանագիտական, մատենագիտական, կրթադաստիարակչական գործունեություն: Բազմագործառույթ հաստատությունը 90 տարի շարունակ ընթերցանության քաղաքականություն է իրականացնում մանուկների եւ պատանիների շրջանում: Տարբեր ծրագրերի միջոցով այն խթանում է մանկապատանեկան գրականության զարգացումը Հայաստանում՝ հանդիսանալով մանկագիրների եւ նկարազարդողների ստեղծագործական ներուժի արտահայտման կարեւոր հարթակ: Գրադարանը նաեւ հանրապետության մանուկներին ու պատանիներին սպասարկող գրադարանների մեթոդական կենտրոնն է, որն իրականացնում է բազմաբնույթ ծրագրեր ու միջոցառումներ՝ ուղղված մանուկների եւ պատանիների կրթական, մշակութային, գեղագիտական զարգացմանը:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ամեն տարի միանում է Հայաստանում անցկացվող «Եվրոպական ժառանգության օրերի պատմություններ» ծրագրին: Գրադարանի ներկայացրած «Հեքիաթի դեսպաններ» նախագիծը «Եվրոպական ժառանգության օրերի պատմություններ» ծրագրի հաղթող նախագծերից է:

««Հեքիաթի դեսպաններ» նախագծի շրջանակում գրադարան են հրավիրվում տարբեր մշակույթների մարդիկ, որոնք հեքիաթ են պատմում իրենց մայրենի լեզվով: ««Եվրոպական ժառանգության օրերի պատմություններ» ծրագրի շրջանակում մենք հնարավորություն ենք ունենում գրադարանի հեղինակային «Հեքիաթի դեսպաններ» ծրագիրը տանելու նաեւ մարզեր՝ ծրագրում ներգրավելով տվյալ համայնքի երեխաներին: Նպատակը մարզերում մշակույթի ապակենտրոնացումն է եւ տեղում երեխաների գեղարվեստական կրթության ժամանցի կազմակերպումը»,- նշում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի տնօրեն Ռուզան Տոնոյանը:

Նրա տեղեկացմամբ՝ տարիներ շարունակ հաջողությամբ իրականացվող «Հեքիաթի դեսպաններ» հեղինակային ծրագիրը նախատեսվում է իրականացնել նաեւ Տավուշի մարզի Աչաջուր եւ Լոռու մարզի Սպիտակ համայնքների գրադարաններում: Նշված համայնքների գրադարաններում կկազմակերպվեն գրքի ճամբարներ, կբացվեն գրքի անկյուններ, ավելի քան 200 անուն գրականություն կնվիրաբերվի այս գրադարաններին, հիմնականում՝ մանկապատանեկան եւ եվրոպական ժառանգության թեմատիկայով:

Ծրագրի առաջին օրը նշված գրադարաններում ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններն իրենց մայրենի լեզվով հեքիաթներ կկարդան երեխաների համար: Հաջորդիվ 3 աշխատանոցներում կանցկացվեն վարպետության դասեր: Համայնքների երեխաներին կներկայացվեն Եվրոպական ժառանգությանը նվիրված պատմություններ, տեղի կունենան նախապես ընտրված ստեղծագործությունների ընթերցում-քննարկումներ: Նկարազարդողների համար կանցկացվեն վարպետության դասեր, եւ երեխաները կարդացած ստեղծագործությունների հիման վրա կցուցադրեն իրենց նկարչական գիտելիքներն ու հմտությունները: Որպես ծրագրի ամփոփում՝ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում կկազմակերպի ցուցահանդես, որտեղ կներկայացվեն երեխաների աշխատանքները: Օրվա շրջանակում երեխաները կայցելեն նաեւ տարբեր մշակութային հաստատություններ:

ԱՎԱՐՏՎԵՑ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՖԻԼՄԻՑ

Ավարտվել են հերթական գեղարվեստական ֆիլմի նկարահանումները Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Ֆիլմի անունը «Կոկո» է, պրոդյուսերը Դավիթ Ադամյանն է, սցենարի հեղինակը՝ Զոհրաբ Բեկ Գասպարենցը, ռեժիսորը՝ Անգել (Էնջլ) Մարտիրոսյանը:

Ֆիլմում նկարահանվել են Նազենի Հովհաննիսյանը, Արմուշը, Լիլուն, Մոսո Կարապետյանը, Քեն Դավիդյանը, Վահագն Ստեփանյանը՝ Դելոն, եւ այլք:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Վահագն Ստեփանյանը պատմեց, որ ֆիլմի գործողությունները ծավալվում են Միացյալ Նահանգներում.

«Դրական կոմեդիա է՝ յուրահատուկ հումորային տարրերով: Ինձ դերն առաջարկել է ռեժիսորը՝ Էնջլ Մարտիրոսյանը, եւ ի սկզբանե ասել է, որ դերը այդքան էլ մեծ չէ: Համաձայնեցի, քանի որ ինձ համար մեծ ու փոքր դերեր չկան, հետո հասկացա, որ, ճիշտ է, դերը փոքր է, սակայն կշիռ ունի: Իմ մարմնավորած կերպարն այն մարդն է, որի պատվին էլ անվանված է ֆիլմը»:

Դելոյի խոսքով՝ շուրջ տասը տարվա դադարից հետո այս նախագիծն իր համար էքսպերիմենտալ է եղել եւ յուրահատուկ նշանակություն է ունեցել. «Yere1»-ից հետո գնացի ԱՄՆ, եղավ շատ մեծ դադար: Իհարկե, ընթացքում այնտեղ զբաղվում էի փոքր նախագծերով, բայց դա այն բուռն հեռուստատեսային կյանքը չէր, որն ունեի մինչ այդ: Ես շնորհակալ եմ դերասական անձնակազմին, հատկապես՝ Նազենի Հովհաննիսյանին, քանի որ նա պրոֆեսիոնալ կինոյի դերասանուհի է եւ խոսքի վարպետ ու շատ հաճախ էր ինձ օգնում, քանի որ այստեղ կային շատ նրբություններ, որոնք չէր եղել մինչ այդ իմ մասնակցությամբ այլ նկարահանումների ընթացքում»:

Համեմատելով «Yere1»-ը «Կոկո»-ի հետ՝ Դելոն ասում է, որ ամեն մեկը յուրովի հետաքրքիր էին ու ժամանակին համահունչ:

«Այն ժամանակ՝ դեռեւս 2008-ին, երբ համացանցն այնքան զարգացած չէր, ինչպես այսօր, եւ առաջատարը հեռուստատեսությունն էր, անհնար էր, որ արտադրանքը լիներ անորակ: Այսօր, երբ համացանցը մեր կենցաղի անբաժան մասն է, առավել անհնարին է դառնում, իսկ բովանդակային առումով միանշանակ շատ տարբեր էին՝ նա սիթքոմ էր, սա՝ գեղարվեստական ֆիլմ»:

Նշենք, որ ֆիլմի պրեմիերայի օրը դեռեւս հայտնի չէ, սակայն նախատեսվում է այս աշնանը պրեմիերան ցուցադրել եւ՛ Հայաստանում, եւ՛ ԱՄՆ-ում:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՆՔԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Անգլիայի երիտասարդական հավաքականի կիսապաշտպան Աարոն Ռեմզին «Աստոն Վիլայից» տեղափոխվեց «Բարնլի»: 20-ամյա ֆուտբոլիստն անգլիական ակումբի հետ կնքել է հինգ տարվա պայմանագիր:

Daily Mail-ը հաղորդել էր, որ «Աստոն Վիլան» Աարոն Ռեմզիի տրանսֆերից կստանա 14 միլիոն ֆունտ ստերլինգ, նաեւ կունենա նրան հետ գնելու իրավունք:

Անցած մրցաշրջանում Աարոն Ռեմզին վարձակալությամբ խաղում էր «Միդլսբրոյում»՝ 31 խաղում խփելով 8 գոլ, կատարելով 4 գոլային փոխանցում:

Ո՞Վ Է ՆՈՐ ՄԱՐԶԻՉԸ

Գյումրիի «Շիրակ» ֆուտբոլային ակումբը նոր գլխավոր մարզիչ ունի: Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը՝նշելով.

«Սիրելի՛ շիրակցիներ, հարգելի՛ ֆուտբոլասերներ, մեր ակումբի գլխավոր թիմը գլխավորել է Արսեն Հովհաննիսյանը: Վերջինս երկար տարիներ աշխատում է մեր ակումբի համակարգում՝ մանկապատանեկան թիմերից հասնելով մինչեւ ակումբի երկրորդ թիմ:

Անցած մրցաշրջանի մեկնարկից 34-ամյա մասնագետը գլխավորում էր «Շիրակ-2»-ը: Արսեն Հովհաննիսյանի գլխավորած մարզչական շտաբում կաշխատեն մարզիչներ Անդրանիկ Բարիկյանը, Վարդան Պավլեյանը եւ դարպասապահների մարզիչ Էդգար Մովսիսյանը:

Շնորհավորում ենք մեր մարզչին նշանակման առթիվ, մարզչական նոր շտաբին մաղթում ենք հաջողություն ու հաղթական ընթացք»:

Հիշեցնենք՝ «Շիրակ»-ը գլխավորում էր Էդգար Թորոսյանը, որը հրաժարականի դիմում է ներկայացրել:

ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի թաեքվոնդիստները օգոստոսի 23-ից մինչեւ օգոստոսի 26-ը Տալլինում կմասնակցեն Եվրոպայի երիտասարդների ու մեծահասակների առաջնությանը, ինչպես նաեւ էստոնիայի բաց առաջնությանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի թաեքվոնդոյի հավաքականը մեծահասակների մրցումներին կմասնակի միայն օլիմպիական քաշային կարգերի ներկայացուցիչներով: Խաղարկվող մրցանակներից բացի, մասնակիցներին կշնորհվեն անհատական վարկանիշային միավորներ:

Հայաստանի թաեքվանդոյի ֆեդերացիան տեղեկացնում է, որ Հայաստանի հավաքականը մրցաշարին կմասնակցի հետեւյալ կազմով՝45 կգ Դավիթ Մուրադյան, 48 կգ Արթուր Ավագյան, 51 կգ Սերգեյ Վարդանյան, 55 կգ Ալեքս Մելիքյան, 59 կգ Արաքսյա Վարդանյան, 63 կգ Վաչե Նուրիջանյան, 68 կգ Հակոբ Ազոյան, 73 կգ Ջիվան Հարությունյան: Մեր հավաքականի մարզիչն է Սամսոն Գրիգորյանը:

● *Օգոստոսի 25-ին «Դվին» մյուզիք հոլում տեղի կունենա Guy Manoukian-ի համերգը: Տոմսերի արժեքը՝25000-55000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԲԱՆԿ

ՀԱՐՑ. Ի՞նչ սահմանափակումներ կան արտասահմանյան վճարային համակարգերի քարտերով գործարքներ իրականացնելիս «ՎՏԲ» բանկում:

Լիլիթ Մադաթյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. VISA եւ MasterCard վճարային համակարգերի որոշմամբ՝ այս պահին ՀՀ տարածքում հասանելի չեն «ՎՏԲ-Հայաստան» բանկի քարտերի կիրառմամբ որոշ գործարքներ՝ անկանխիկ վճարումներ առցանց հարթակում եւ խանութներում, միջոցների կանխիկացում այլ բանկերի բանկոմատներից:

«ՎՏԲ -Հայաստան» բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բնականոն ռեժիմով հասանելի են կանխիկի ստացումը «ՎՏԲ-Հայաստան» բանկի բոլոր բանկոմատներում ու մասնաճյուղերում, ինչպես նաեւ դրամական միջոցների փոխանցումը եւ վճարումները (կոմունալ վճարումներ, հաշիվների համալրում, վարկերի մարում եւ այլն) «ՎՏԲ-Հայաստան» բանկի բոլոր մասնաճյուղերում, «Մոբայլ» եւ «Ինտերնետ բանկինգ» հավելվածների, ինչպես նաեւ «Վիդեո բանկ» եւ «Հեռախոս բանկ» ծառայությունների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ՀՀ քաղաքացի եմ, սակայն բնակվում եմ ոչ թե Հայաստանում, այլ մի երկրում, որի քաղաքացիությունը չունեմ: UWC դիմելիս ազգային կոմիտեներից որի՞ հետ պետք է կապ հաստատել:

Միհրան Օսեյան (27 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Առաջին հերթին պետք է կապ հաստատել բնակության երկրի ազգային կոմիտեի հետ եւ տեղեկանալ՝նրանք ընդունում են արդյոք բնակության երկրի քաղաքացիություն չունեցող անձանց դիմումները:

Եթե ազգային կոմիտեն ի պատասխան հայտնում է, որ, քաղաքացի/հայրենակից չլինելու հանգամանքով պայմանավորված, Ձեր հայցադիմումին չի կարող ընթացք տալ, կապ հաստատել UWC միջազգային գրասենյակի հետ:

UWC Հայաստան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետք է նախօրոք համոզվել, որ հարցման համար դեռ բավարար ժամանակ ունեք, այլապես կարող եք բաց թողնել հայցադիմումների ներկայացման վերջնաժամկետը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Սլովենիայում ընթացող կրտսեր տարիքի պատանիների Եվրոպայի առաջնությունում Հայաստանն ապահովել է 13 մեդալ: Մեր մարզիկներից Լիաննա Ժամհարյանն ապահովել է եզրափակչի ուղեգիրն ու առնվազն արծաթե մեդալը: Աղջիկների պայքարում Աստղիկ Խաչատրյանը բավարարվել է բրոնզով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+13 + 16 +24 + 28
Կոտայքի լեռներ	+12 + 14 +24 + 28
Կոտայքի նախալեռներ	+20 + 22 +29 + 32
Գեղարքունիք	+11 + 15 +21 + 25
Լոռի	+12 + 16 +24 + 29
Տավուշ	+16 + 21 +28 + 33
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +24 + 27
Արագածոտնի նախալեռներ	+18 + 22 +32 + 36

Արարատ	+19 + 23 +35 + 37
Արմավիր	+16 + 19 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+11 + 13 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+19 + 23 +34 + 37
Սյունիքի հովիտներ	+20 + 22 +34 + 37
Սյունիքի նախալեռներ	+13 + 16 +24 + 28
ԼՂՀ	+19 + 23 +29 + 32
Երեւան	+21 + 24 +30 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.8.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ
չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային
հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս
կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել
հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք
կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*